ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
2022 թ.
№ 18 (1097)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Միջազգային գիտաժողով՝ նվիրված մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրներին

Մանկավարժական համալսարանում դեկտեմբերի 15-16-ը անցկացվեց «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողով:

Գիտաժողովի առաջին օրն անցկացվեց լիագումար նիստ, որը բացեց համալսարանի ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը:

Համալսարանի ռեկտորը կարևորեց գիտաժողովը՝ բուհի համար կենսական նշանակության հիմնախնդիրների առումով, և շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին այս բարդ շրջանում գիտաժողովին մասնակցելու համար:

Մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված գիտաժողովին մասնակցում էին արտերկրի 8 ներկայացուցիչ, ևս 7-ը միացան առցանց ձևաչափով՝ քննարկելու ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի կողմից առաջարկված թեմաները, կիսելու իրենց տեսակետները մանկավարժական հիմնախնդիրների շուրջ և լուծումներ առաջադրելու:

Ռեկտորն անդրադարձավ «Սովորեցնում ենք սովորեցնել» կարգախոսով ընթացող բուհական գործընթացներին, բարեփոխումներին՝ մանկավարժության մեթոդների ու մեթոդիկաների հիմնախնդիրների վերաբերյալ, որոնք տեղի են ունենում աշխարհում: Համալսարանի ղեկավարը բուհի համար 100-ամյակը համարեց փուլային ամփոփում, որը մի շարք հարցադրումներով է պայմանավորվում. որո՞նք են նոր ուղենիշներն ու առաջնահերթությունները, ի՞նչ նոր մեթոդներ ու մասնավոր մեթոդիկաներ է առաջարկվում, ո՞րն է մանկավարժական կրթության տեսլականը՝ այն հեռանկարային զարգացումները, որոնց հիմնարար թեզիսների վերաբերյալ բուհը պիտի կառուցի իր աշխատանքները:

Ռեկտորն անդրադարձավ ժամանակակից փոփոխություններին՝ ամերիկյան, եվրոպական, ռուսական հայեցակարգերի ներկայացուցիչների հետազոտական մոտեցումներին, այդ համատեքստում երեխայի արժեհամակարգի ճիշտ ձևավորմանը՝ հոգեֆիզիոլոգիական և հոգեկան առումով:

➢2

Մանկավարժականը՝ միջազգային կապերի հարթակ

Մանկավարժական համալսարանում կայացավ Երիտասարդ առաջնորդների եռօրյա միջազգային դպրոցի բացման հանդիսավոր արարողությունը:

Միջազգային դպրոցը «Ռոսստրուդնիչեստվո»-ի՝ «Ռուսաց լեզուն. հաջողության իմ բանաձևը» նախագծի վերջին փուլն է, որն իրականացնում է ՌԴ-ի Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանը:

Ձեռնարկին մասնակցում էր 4 երկրի 16 համալսարանի 40 մասնակից, այդ թվում՝ Հայաստանից, Բելառուսից, Ղրղզըստանից և Տաջիկստանից:

Ապագայի ուսուցիչ. հաջողության համընդհանուր բանաձև, ռուս անվանի գիտնականների և մշակութային գործիչների հաջողության բանաձևը, ռուսաց լեզվի հաջող դաս. գաղտնի բանաձև, կյանքի բանաձևը ժամանակակից ռուսական գրականության և մշակույթի մեջ. բուհերի բանասիրական և մանկավարժական ֆակուլտետների մասնակից-ուսանողները ռուսերենով այս թեմաների վերաբերյալ ներկայացրել են տեսանյութ կամ

մուլտիմեդիա շնորհանդես:

ՀՊՄՀ Միջազգային համագործակցության բաժնի պետի տեղակալ Աննա Հախումյանը, ողջունելով դպրոցի մասնակիցներին, ընդգծեց՝ կրթական այն հաստատությունում եք, որն ունի 100 տարվա պատմություն, և որի առաքելությունը մեր երկրի համար ուսուցիչներ, մանկավարժներ պատրաստելն է:

Աննա Հախումյանը վստահեցրեց՝ Երիտասարդ առաջնորդների դպրոցը մասնակիցների համար կբացահայտի հաջողության իրենց բանաձևը:

«Ռոսսոտրուդնիչեստվո»-ի

➢2

Հոբելյանական տարում պարգևատրումների պակաս չկա. բուհի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը Գիտական խորհրդի որոշմամբ համալսարանական կրթության զարգացման գործում նշանակալի ավանդի համար պրոֆեսորադասախոսական կազմին շնորհում է համալսարանի մեդալներ:

Հոբելյանական տարվա առթիվ պարգևատրումները շարունակվում են

Սկզբնական կրթության ֆակուլտետ

Հերթական պարգևատրումներն ու մասնագիտական արժևորումը Սկզբնական կրթության ֆակուլտետում էր. «Մանկավարժական համալսարան» մեդալով ռեկտոր Սրբուհի Գևորգյանը պարգևատրեց Սկզբնական կրթության ֆակուլտետի պրոֆեսորներ Ջուլիետա Գյուլամիրյանին, Սվետլանա Մարությանին, դոցենտներ Լուսինե Պողոսյանին, Քնարիկ Հովհաննիսյանին, Լիլիթ Տեր-Գրիգորյանին և Արմինե Միքայելյանին:

Դոցենտներ Արմինե Մանուկյանն ու Արմինե Դալլաքյանը պարգևատրվեցին ՀՊՄՀ 100-ամյակի հուշամեդալով, ֆակուլտետի մի խումբ դասախոսների էլ ռեկտորը պատվոգրեր և շնորհակալագրեր հանձնեց:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց ու գնահատեց Սկզբնական կրթության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական ներուժը, դասախոսական կազմի մասնագիտական կարողություններն ու բարձր պատրաստվածությունը:

Դեկան Հեղինե Խաչատրյանը խոստովանում է՝ հաճելի

է, երբ գնահատվում է աշխատանքն ու վաստակը, դա մասնագետներին խրախուսում է առավել նվիրվել ստեղծագործ աշխատանքին, պատասխանատվությունը դարձնել աշխատանքի և օրվա պահանջ, կրթական գործընթացներում անել հնարավորն ու անհնարը:

Դեկանն էլ ֆակուլտետի անունից հոբելյանի խորհրդանշական հուշամեդալներ հանձնեց ռեկտորատի ներկայացուցիչներին:

Հանդիպումն ավարտվեց ֆակուլտետի մասին պատմող ուսանողական տեսաֆիլմի դիտումով, որից հետո ուսանողները բացիկներով իրենց բարեմաղթանքները հղեցին դասախոսներին:

Բանասիրական ֆակուլտետ

«Բանասիրական ֆակուլտետն առանցքային նշանակություն ունի Մանկավարժական մայր բուհի համար: Ձերն է լեզուն և մայրենին անաղարտ պահելու, հայրենասիրության ամենավսեմ զգացմունքներն արթնացնելու առաքելությունը, ինչը սրբորեն փոխանցում եք ապագա մանկավարժներին»,-Բանասիրական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմին դիմեց ռեկտոր Սրբուհի Գևորգյանը:

Ռեկտորը գիտության և մանկավարժության բնագավառում ունեցած նշանակալի ավանդի համար բուհի բարձրագույն՝ «Խաչատուր Աբովյան» մեդալ շնորհեց պրոֆեսորներ Մարտին Գիլավյանին և Էդուարդ Մկրտչյանին:

«Մանկավարժական համալսարան» մեդալով պարգևատրվեցին պրոֆեսորներ Սուրեն Դանիելյանը, Վազգեն Համբարձումյանը և Գայանե Խալաթյանը, իսկ պրոֆեսոր Աշոտ Գալստյանն ու դոցենտ Լիլիթ Հովսեփյանը պարգևատրվեցին ՀՊՄՀ 100-ամյակի հուշամեդալով:

Բարեխիղճ և արդյունավետ աշխատանքի համար մի խումբ դասախոսներ արժանացան պատվոգրերի և շնորհակալագրերի:

Ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը անդրադարձ արեց ֆակուլտետի երևելիներին՝ վստահեցնելով, որ անցյալը հիշելով պետք է նայել առաջ և հայ դպրոցի ապագա ուսուցչին կրթել ազգային գաղափարներով ու երևելիների թողած հարուստ ժառանգությամբ:

Միջազգային գիտաժողով՝ ...

➢1 Սրբուհի Գևորգյանը խոսեց մանկավարժական կրթության առաջնահերթ հիմնախնդիրների ու լուծումների մասին՝ ընդգծելով երեխայի՝ էկրանային կախվածությունը, նևրոտիկ, հուզական դրսևորումները, որոնք ազդում են երեխայի սոցիալական վարքագծի վրա:

Անդրադառնալով տեխնոլոգիաների վերահսկման մեխանիզմներին՝ ռեկտորը նշեց. «Տեխնոլոգիաներն այսօր այն տիրույթն են, առանց որի մենք չենք կարող որևէ փոխներգործություն պայմանավորել, որովհետև տեխնոլոգիաների զարգացումը հեշտացրել է մեր կյանքը: Ինչքանո՞վ ենք, սակայն, դա ճիշտ օգտագործում: Որո՞նք են այն հստակ չափանիշները, որի ներքո պետք է կազմակերպվի երեխայի և տեխնոլոգիայի փոխներգործությունը, որպեսզի դրանք նպաստեն երեխայի հոգեկան, ներդաշնակ զարգացմանը»:

Սրբուհի Գևորգյանն ընդգծեց՝ քաղաքական և քաղաքացիական դժվար ժամանակներ ենք ապրում, և Մանկավարժական համալսարանն է, որ համալիր ծրագիր և մոտեցումներ պետք է ներկայացնի մանկավարժության մարդաբանական հիմնախնդիրների համար, որոնք շատ կարևոր են նաև գոյաբանական տեսանկյունից: Ռեկտորն ընդգծեց հաղորդակցման դերը՝ որպես ամենակարևոր գործընթաց, և նրա ներքո նախադպրոցականից մինչև հանրակրթական դպրոց արժեքների ձևավորվման գործում անհրաժեշտ փոփոխությունները:

Ռեկտորը հորդորեց վերոհիշյալ հիմնախնդիրների շուրջ հանդես գալ առաջարկություններով և փորձի փոխանակման ակտիվ միջավայրում հստակ ուրվագծել մանկավարժական կրթության տեսլականը:

«Մանկավարժության զարգացման ժամանակակից հիմնախնդիրները» խորագրով զեկուցումով հանդես եկավ ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը:

Նոր աշխարհի տեսլականի ու մանկավարժության համատեքստում պրոֆեսորն անդրադարձավ ՄԱԿ-ի զեկույցին՝ ընդգծելով «մանկավարժության վերահմաստավորման, նոր առաքելության, գործառույթների ու նպատակների, ուսուցչի նոր դերի ու նոր կոմպետենցիաների» հիմնախնդիրը:

Ամբիոնի վարիչը հանգամանորեն խոսեց ժամանակակից աշխարհում վտանգված արժեքների, քաղաքականության և քաղաքակրթության միջև բախումների, հասարակության և մանկավարժության խնդիրների և նոր մանկավարժության առանձնահատկությունների մասին:

Կարևորելով մանկավարժների դերի և առաքելության վերահմաստավորման հիմնախնդիրը ժամանակակից փոխխությունների համատեքստում՝ պրոֆեսորը փաստեց՝ Մանկավարժական համալսարանն առանձնահատուկ դեր ունի. մեկ դար կրթել և ուսուցանել է մանկավարժների տարբեր սերունդների, որպես մանկավարժական կադրեր պատրաստող առաջնակարգ բարձրագույն կրթական օջախ եղել է ու կլինի:

Այնուհետև Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և մանկավարժության ինստիտուտի մանկավարժության դեպարտամենտի պրոֆեսոր, կրթական քաղաքականության գծով տնօրեն Աննա Լվովան, Կրթության հոգեբանության և մանկավարժության ինստիտուտի մանկավարժության դեպարտամենտի դոցենտ, ռեսուրսային ապահովման գծով փոխտնօրեն Օլգա Լյուբչենկոն հանդես եկան «Գիտամասնագիտական շարժունության մոդելի իրականացման շրջանակներում ժամանակակից մանկավարժի նախապատրաստումը», իսկ Մոսկվայի պետական տեխնոլոգիական համալսարանի օտար լեզուների ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր Տատյանա Վասիլևան՝ «Լեզուն մասնագիտական նպատակներով, ինչ պետք է իմանա ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման ապագա մասնագետը» զեկուցումով:

Ռուս գործընկերները ներկայացրին Ռուսաստանի Դաշնությունում և իրենց համալսարաններում մանկավարժական հիմնախնդիրների լուծմանը վերաբերող մի շարք ձեռնարկներ, անդրադարձան դասավանդողի որակավորումների բարձրացման և ուսանողների մասնագիտական պատրաստվածության իրենց փորձին, հադես եկան մի շարք առաջարկություններով:

Գիտաժողովը երկու օր շարունակվեց «Կրթության նորարարական տեխնոլոգիաներ», «Բարձրագույն կրթության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրներ», «Հանրակրթություն. մարտահրավերներ, զարգացման հեռանկարներ» «Կրթության նորարարական տեխնոլոգիաներ» խորագրերով բաժանմունքներում:

Մանկավարժականը՝ միջազգային կապերի հարթակ

➢1 ներկայացուցիչ, փորձագետ, ծրագրերի համակարգող Տատյանա Դրոնսկայան շնորհակալություն հայտնեց գործընկերներին՝ ծրագիրը համատեղ կյանքի կոչելու համար:

Մասնագիտությամբ մանկավարժ Տատյանա Դրոնսկայան նկատում է՝ օտարազգի շատ ուսանողներ է ունեցել. բոլորն էլ համակարծիք են՝ ռուսաց լեզուն եզակի է ու տարբերվող, իսկ նախագիծը կարևոր քայլ՝ այն հանրահռչակելու համար:

«Ռոսսոտրուդնիչեստվո»-ի ներկայացուցիչը տեղեկացրեց՝ դպրոցի շրջանակներում մասնակիցներին կհյուրընկալեն նաև «Ռուսսկիյ դոմ» Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնում, կծանոթացնեն կառույցի գործունեությանը, ծրագրերին:

Երիտասարդ առաջնորդների եռօրյա միջազգային դպրոցի ծրագիրը գերհագեցած է. նպատակ ունի զարգացնել մասնակիցների նախագծային ու առաջնորդական հմտությունները, թիմում աշխատելու և աշխատանքը կազմակերպելու կարողությունները, որոնք անհրաժեշտ են ապագա ուսուցիչներին:

Դպրոցի շրջանակներում կներկայացվեն առաջնային դասերի կազմակերպման նորարարական ձևերը, այդ թվում վարժություններ՝ թիմային փոխգործակցության, հաղորդակցության, առաջնորդության որակների բացահայտման վերաբերյալ:

Նախատեսված են նաև ինտերակտիվ դասախոսություններ՝ ժամանակակից երիտասարդության հնարավորությունների և «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի նախագծերի վերաբերյալ, կանցկացվեն վարպետության դասեր՝ ռուսաց լեզվի, տարբեր լսարանների դասավանդման մեթոդների, թիմային անհատական արդյունավետության և աշխատանքի վերաբերյալ: Կկազմակերպվեն նաև ինտելեկտուալ խաղեր, նախագծային գաղափարների և նախաձեռնությունների հանրային ներկայացում:

Մանկավարժական համալսարանում դեկտեմբերի 13-15-ը ՀՊՄՀ-ի և Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի համատեղ նախաձեռնությամբ կայացավ Երիտասարդ առաջնորդների եռօրյա միջազգային դպրոցը, որի ընթացքում ամփոփվեց «Ռոսսոտրուդնիչեստվո«-ի՝ «Ռուսաց լեզուն. հաջողության իմ բանաձևը» նախագծի արդյունքները:

Դեկտեմբերի 16-ին Մանկավարժական համալսարանում ամփոփվեց Երիտասարդ առաջնորդների եռօրյա միջազգային դպրոցը:

Հանդիսավոր փակմանն ու հավաստագրերի հանձնման արարողությանը ներկա էին ՀՊՄՀ-ի, ՌԴ-ի Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի ռեկտորներ Սրբուհի Գևորգյանը, Դմիտրի Բեսպալովը, ծրագրի մասնակից երկրների՝ Հայաստանում՝ Ռուսաստանի, Բելառուսի, Ղրղզըստանի, Տաջիկստանի դեսպանատան, ինչպես նաև «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի ներկայացուցիչները:

Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի ռեկտոր Դմիտրի Բեսպալովն ուրախությամբ նկատեց՝ ՀՊՄՀ-ի հետ համատեղ հերթական ծրագիրն այս անգամ էլ հաջողություն ունեցավգ կայուն գործընկեր, որն արդյունավետ իրականացրեց և իր հարկի ներքո հյուրընկալեց ծրագրի 40 մասնակցի:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանն ընդգծեց՝ 100-ամյա բուհը մշտապես պատրաստ է լինել միջազգային կապերի հարթակ, որում ներգրավված են տարբեր երկրների ուսանողներ: Նա հույս հայտնեց, որ եռօրյա դպրոցն արդարացրեց մասնակիցների ակնկալիքները, այդ թվում՝ նոր ընկերների ձեռքբերում, երիտասարդների հաղորդակցում, փորձի փոխանակում, մասնագիտական գիտելիքների հարստացում: Ռեկտորը վստահ է՝ առաջիկայում կլինեն նոր ծրագրեր ու նախագծեր, որոնք կհամախմբեն երիտասարդներին անկախ երկրից. աշխարհի բոլոր ուսանողները նույնն են:

ՀՀ-ում ՌԴ դեպանատան մշակույթի հարցերով ներկայացուցիչ Դենիս Նազարովը դեսպան Սերգեյ Կոպիրկինի անունից շնորհավորեց «Ռուսաց լեզուն. հաջողության իմ բանաձևը» նախագծի մասնակիցներին: Նրա կարծիքով մասնակիցներն այս օրերի ընթացքում գտել են հաջողության իրենց բանաձևը: Ծրագրի՝ 4 երկրի 16 համալսարանի 40 մասնակիցներին, նաև առցանց, ՀՀ-ում դեսպանների և իրենց անունից շնորհավորեցին դեսպանատան ներկայացուցիչները:

Նրանք համակարծիք են՝ նման նախագծերի շնորհիվ է, որ հանրահռչակվում է ռուսերենը, իսկ ծրագրում ընդգկված երիտասարդները հպարտություն են և կարող են ապահովել ցանկացած ազգի ապագան:

Երիտասարդ առաջնորդների եռօրյա միջազգային դպրոցի իրականացման համար կազմակերպիչներին շնորհակալություն հայտնեցին նաև ծրագրի մասնակիցները՝ ընդգծելով՝ արժեր անցնել մի քանի հազար կիլոմետր, հայտնվել հյուրընկալ Հայաստանում, իսկ ռուսաց լեզուն, իսկապես, իր հետ բերեց հաջողության բանաձև:

Ավարտը ավելի քան խորհրդանշական էր. մասնակիցներին միավորեց կարմիր ժապավենը՝ ի նշան ռուսաց լեզվի և միմյանց շուրջ համախմբվելու:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

Նրանք արժանացել են Մանկավարժական համալսարանի բարձրագույն պարգևի՝ «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ» մեդալի

Մարտին ԳԻԼԱՎՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«Բուհի բարձրագույն պարգևը առաջին հերթին պարտավորեցնող է. այդ պարգևը կարող է նոր հեռանկարների, նոր ծրագրերի առիթ հանդիսանալ:

Հոբելյանական տարիների ընթացքում տարբեր պարգևներ եմ ստացել՝ բուհի 80 և 90-ամյակների կապակցությամբ՝ իմ 60-ամյակի կապակցությամբ վարչապետի պարգև, վարչապետի մեդալ, Ֆրիտյոֆ Նանսենի մեդալ, բայց սա խորհրդանշական է, որովհետև համընկավ համալսարանի 100-ամյակի հետ, և դա ավելի շատ է պարտավորեցնում,- ասում է պրոֆեսոր Մ. Գիլավյանը:

- Բուհ եմ ընդունվել 1965 թվականին, շուրջ 55 տարի…և պարզվում է բուհում ավելի շատ եմ եղել, քան մեր տանը:

Հրաշալի դասախոսներ ենք ունեցել, որոնց փորձը ընդօրինակել է պետք, նրանց ավանդույթները՝ շարունակել ու զարգացնել: Հայագիտության մեջ երախտավորներ էին մեզ դասավանդում՝ Արարատ Ղարիբյան, Աշոտ Աբրահամյան, Վաղարշակ Քոսյան, Բոգդան Վերդյան, Վաչե Պարտիզունի, Արշալույս Բաբայան, Եղիշե Պետրոսյան, Հեկտոր Ռշտունի, Առաքել Առաքելյան…Մի խոսքով՝ հայագիտության, գրականագիտության ու լեզվաբանության իսկական համաստեղություն: Յուրաքանչյուրի մասին շատ ջերմ հիշողություններ կան, նրանք մեզ ոչ թե սովորեցնում էին, այլ սովորեցնում էին սովորեցնել և նրանց դասավանդման մեթոդներից շատերը այսօր էլ խիստ արդիական են: Օրինակ, հիշում եմ՝ գրականության դասախոսներ Վաչե Պարտիզունու և Պարույր Սահակյանի համար այնքան էլ նշանակություն չուներ, եթե ուսանողը որևէ հարցի պատասխանը չգիտեր, նրանց համար կարևոր էր, թե ինչպես է կարողանում ուսանողը տեքստը ընթերցել, ինչ եզրահանգումներ է անում, որովհետև կարևորը ինքնուրույնությունն էր, եթե ուսանողը սխալվում էր՝ ուղղում էին:

Ֆակուլտետից իմ հիշողություններում թարմ են հանդիպումները շրջանավարտ և ոչ շրջանավարտ գրողների հետ: Այսօրվա պես հիշում եմ մեր հանդիպումները Սերո Խանզադյանի, Գևորգ Էմինի, Համո Սահյանի, Պարույր Սևակի, Սիլվա Կապուտիկյանի հետ: Եվ շատ հրաշալի է, որ այդ ավանդույթը շարունակվում է մեր դեկանատի նախաձեռնությամբ, և ոչ մի նշանակություն չունի, որ մեր շրջանավարտ գրողների ճնշող մեծամասնությունը մեզ հետ չէ, բայց մեզ հետ են նրանց ստեղծագործությունները: Մեր ուշադրության ներքո են նաև նրանց ընտանիքի անդամները: Վերջերս բանաստեղծ Երվանդ Պերոսյանին նվիրված հուշ-ցերեկույթի էր կազմակերպվել, որը խիստ օգտակար եղավ մեր ուսանողության համար:

Հանդիպումները Հրանտ Մաթևոսյանի, Արամայիս Սահակյանի, Ռազմիկ Դավոյանի, Լիպարիտ Սարգսյանի հետ խիստ օգտակար էին ուսանողների համար, որովհետև ուսանող-գրող շփումը ուսանողին հաճախ ավելի շատ բան կարող է տալ, քան դասախոսությունները:

100-ամյա բուհը թևակոխում է իր երկրորդ հարյուրամյակը: 100-ամյակը մենք նշեցինք շատ ծանր պայմաններում. մեր շրջանավարտներից և ուսանողներից շատերն իրենց կյանքը դրեցին հայրենիքի փրկության զոհասեղանին: Փառք ու պատիվ նրանց: Նրանք ոչ թե զոհվեցին, այլ անմահացան: Եվ մենք հպարտանում ենք մեր այդ ուսանողներով:

Հուսով եմ, որ հաջորդ 100-ամյակը ավելի բեղմնավոր կլինի բուհի համար. կգան նոր սերունդներ, կփոխարինեն արդեն ճանաչում ստացած մեր դասախոսներին: Մեր բուհը կշարունակի մնալ մանկավարժներ պատրաստող հիմնական դարբնոցը Հայաստանի, Արցախի և Սփյուռքի կրթօջախների համար: Մեր ուսանողներից, շրջանավարտներից շատերն աշխատում են դպրոցներում. նրանք գործի նվիրյալներ են և Մանկավարժական համալսարանից տարել են ոչ միայն գիտելիքներ, այլև ավանդույթներ»:

Էդուարդ ՄԿՐՏՉՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«Ինձ համար շատ հաճելի էր բուհի հիմնադրման 100-ի առթիվ «Խաչատուր Աբովյան» մեդալով պարգևատրվելը: Երբ նայում եմ իմ անցած ճանապարհին, զգում եմ, որ արժանի էի՝ ստանալու այդ պարգևը, -ասում է պրոֆեսորը:

-1950 թվականին ընդունվել եմ այն ժամանակվա Մանկավարժական ինստիտուտ և մինչ այսօր այստեղ եմ՝ 70 տարվա ճանապարհ եմ անցել այս բուհի հետ. իմ կյանքի ղգալի մասը ես անցկացնում եմ Մանկավարժական համալսարանում: Անսահման գոհ եմ, որովհետև ես այստեղ եմ ձևավորվել իբրև մարդ, իբրև դասախոս, ինչպես նաև հասարակական գործիչ:

Սկսած ուսումնառության տարիներից, 7 տարի ուսուցիչ եմ աշխատել Սիսիանի դպրոցներում, որից հետո՝ 1962-ին, ընդունվել եմ Մանկավարժական համալսարանի ասպիրանտուրայի հեռակա բաժինը: Ասպիրանտուրայի երկրորդ տարում իմ գիտական ղեկավար Արարատ Ղարիբյանը և ամբիոնի վարիչ Աշոտ Աբրահամյանը գտան, որ ես պետք է սովորեմ առկա համակարգում: Ես ընդունվել էի գրաբարի գծով, բայց անհրաժեշտ էր, որ ծանոթանայի հունարեն, լատիներեն լեզուներին: 1963-ից ես դարձա ասպիրանտուրայի առկա բաժնի ասպիրանտ: 1966-ին ավարտել եմ ասպիրանտուրան և մշտապես կապվել Մանկավարժականի հետ: Արդեն 59 տարի ես դասախոսում եմ այստեղ: 1958-ին թեկնածուականը պաշտպանելով՝ լրիվ դրույքով անցա դասախոսական աշխատանքի: Հաճելի պատասխանատվության տարիներ էին դրանք, որոնց ընթացքում ես մասնագիտական աճ եմ ունեցել:

Ամբիոնի վարիչ Աշոտ Աբրահամյանն ինձ վստահեց դասավանդել պատմական քերականություն, որն անսահման

հետաքրքիր, միաժամանակ բարդ առարկա էր: Ինձ համար արտակարգ հաճելի եղավ՝ գրաբարի և պատմական քերականության դասավանդումը, որի ընթացքում ես շփվում էի լեզվական բազմաթիվ ուղղությունների, առարկաների հետ՝ գրաբար, բարբառագիտություն, ընդհանուր լեզվաբանություն, լեզվի վաղ շրջանից մինչև ժամանակակից հայերեն…Այսպիսով դարձա նաև հայոց լեզվի պատմության դասախոս:

Տարիների ընթացքում զբաղվելով գիտական գործունեությամբ՝ բազմաթիվ գրքեր գրեցի՝ Գրաբարի դասընթաց, Հայոց լեզվի պատմության դասընթաց բուհական դասագրքեր, որոնք եղան իմ աշխատանքի արդյունքը: Զուգահեռաբար զբաղվել եմ նաև գրաբարից աշխարհաբարյան թարգմանություններով և այսօր էլ շարունակում եմ թարգմանական աշխատանքը: Գրքեր եմ հրատարակել՝ «Աղվանից երկրի պատմությունը», 2019-ին հրատարակել եմ «Պատմություն Արցախի» գրաբարից աշխարհաբարի թարգմանություն գիրքը. դա թարգմանություն էր երկու շատ անվանի հոգևորականների ձեռագրերի, որոնք աշխատել են Գտիչ վանքում: Այդ ձեռագրերը ես վերցրել եմ Մատենադարանից, թարգմանել, որը վերածվել է գրքի՝ Առաքել Կոստանդյանյանցի հեղինակությամբ և իմ թարգմանությամբ:

Այսօր ես դասավանդում եմ տարբեր առարկաներ՝ Գրաբարից մինչև Տիպաբանություն, Ժամանակակից հայոց լեզու, միաժամանակ օգնում եմ Արցախի պատմաբաններից մեկին՝ Սլավա Սարգսյանին, որը գրում է Արցախի վանքերի, եկեղեցիների պատմությունը, և երբ հանդիպում է գրաբարյան ձեռագրերի, դժվարանում է, դիմում է ինձ:

Ես չեմ կարողանում հանգիստ մնալ. անընդհատ աշխատում եմ, թարգմանում:

Ես արմատներով Հադրութի շրջանի Խծաբերդ գյուղից եմ, հայրական տունս էլ մնաց օտարին: Ես գրել եմ Խծաբերդի պատմությունը, 250 էջ, պատրաստվում եմ տպագրության հանձնել:

Շատ ռեկտորների հետ եմ աշխատել: Իմ ուսանողներն այսօր դասախոսներ են, բարձր պաշտոններ են վարում: Իմ ուսանողներն են եղել նաև ֆակուլտետի ներկայիս դեկան, դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գալստյանը և դոկտոր, պրոֆեսոր Մարտին Գիլավյանը: Կրկնակի հպարտություն է, որ այսօր դասախոս և ուսանող արժանացանք համալսարանի բարձրագույն պարգևին:

100-ամյա բուհին ես մաղթում եմ հաջողություններ, առաջընթաց, այն, ինչ տեսել եմ իմ գործունեության ողջ ընթացքում»:

Ֆաենբերգ ՍԱՐԳՍՅԱՆ

Պրոֆեսոր

Արդեն կես դար աշխատում եմ Մանկավարժականում: Իմ ուսանողներն այսօր սփռված են աշխարհով մեկ, ստուդիաներ ունեն, ճանաչված նկարիչներ են: Ուսանողներ ունեմ, որ ԱՄՆ-ում կինոարվեստի մեջ են՝ Հոլիվուդում 50-60 աշխատանք ունեն ֆիլմերից արած: Թերևս իմ տարիների աշխատանքով է պայմանավորված նրանց այդ գործունեությունը:

Արմատներով մշեցի եմ, մերոնք այնտեղից գաղթել են, հաստատվել Գյումրիի Ղուկասյան համայնքում: Ես այնտեղ եմ ծնվել, բայց մեծացել եմ Երևանում:

Բոլոր ժամանակներում ստեղծագործել եմ, ունեցել եմ ցուցահանդեսներ, որոնցից հիշարժաններն են Ազգային պատկերասրահում, Նկարիչների միության սրահում, Փարիզում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Գերմանիայում, տարբեր երկրներում ներկայացրածները:

Դեռևս 10 տարեկանում մասնակցել եմ Չեխիայում կազմակերպված նկարչական աշխատանքների ցուցահանդեսի և ստացել աշխարհի մեդալ:

Ունեմ բազմաթիվ հետաքրքիր, ստեղծագործություններ. հատկապես սիրում եմ հոգեբանական դիմանկարներ անել, որոնց հետ կարելի է զրուցել…

Ես կարողանում եմ ժամանակն ավելի շուտ զգալ, կանխազգալ…Արցախի պատերազմը ես վաղուց էի կանխազգացել, այդպես զգացել եմ նաև շատ ճանաչված մարդկանց մահը…

Այս պարգևը իմ աշխատանքի գնահատումն էր, ամենամեծ պարգևն ինձ համար: Հպարտ եմ և շնորհակալ, որ գնահատվեց տարիների իմ աշխատանքը:

Այսօր էլ մեծ հաճույքով եմ աշխատում նոր սերնդի ուսանողների հետ. նրանք շատ հա-

մարձակ են, առաջ են անցել ժամանակից…ուղղակի պետք է ճիշտ ուղղորդել նրանց:

Այս սերնդի մեջ ծայրահեղություններ եմ նկատում՝ կամ շատ լավն են, կամ հակառակը:

Ասեմ, որ նկարչական որևէ ուղղության հետևորդ չեմ, ես ֆաենիստ եմ…Ինձ նմանը չկա, և ես ոչ մեկին նման չեմ: Վերցնում եմ բոլորից, յուրացնում իմ մեջ և հանում եմ իմը: Երբեք չեմ կրկնում ոչ մեկին: Այդպես արել է Պիկասոն:

Ես միշտ մտածում եմ, որ ամենատաղանդավոր գործը հետո եմ ստեղծելու: Իսկ նկարներս գնահատելու համար ինձ տարիներ են պետք, երբ ես զարմանում եմ, թե այս նկարներն ինչպես եմ ստեղծել: Տարիներով կարող ես աշխատել ու կանգ չառնել…Պետք է նկարիչն ինքը զգա դադար տալու ժամանակը: Գույներն էլ ծնվում են տրամադրությունից ու տվյալ վիճակից:

Որպես այս 100-ամյա համալսարանի կեսդարյա ուղեկիցը՝ հարազատ կրթօջախիս մաղթում եմ նոր զարգացումներ ու առաջընթաց մանկավարժական կադրերի պատրաստման գործում:

Նաև կուզեի, որ բուհը ֆինանսական անկախություն ունենար և կարողանար հավուր պատշաճի խրախուսել ստեղծագործող ուսանողներին:

Լռեր խռովքն այս, ու ինձ թվար,
Թե ես աղբյուր եմ մամուռն ի վար,
Գարնան անձրև եմ ու առավոտ,
Ցողաթաթախ եմ ու շաղավոտ,
Լեռնային լիճ եմ, այնքան եմ ջինջ,
Որ մեջս լույս է ու էլ ոչինչ,
Ցորենի հասկ եմ, որ լուռ հակվում,
Ճառագայթով է շարունակվում,
Լեցուն փեթակ եմ, ոսկե փեթակ,
Որ զրնգում է արևի տակ,
Կապույտ ծաղիկ եմ, խոտ եմ ու սեզ,
Այնքան խոնարհ եմ, հո՜ղ եմ ասես,
Այնքան թեթև եմ, անանձնական,
Որ բարի լո՜ւյս եմ, որ ես չկամ…

Առավոտի ու կապույտի երգիչը

Ժամանակի ու տարածության մեջտեղում որքա՜ն սերեր ու կարոտներ կան առկախված, որքա՜ն թախիծ ու տրտմություն... Նրան հաջողվեց մեկիկ-մեկիկ հավաքել իր հուշի ծվենները, սերերն ու կարոտները՝ դրանք դարձնելով հոգեպարար երգ ու բանաստեղծություն… Եփրատի ափին ծվարած կորուսյալ երկրի լուսավոր առավոտների ու կավե կապույտ կտուրների մասին ցավոտ հիշողությունների արձանագրումները տարիների հեռվից ալիք տվեցին, ջերմացրին հոգիները, մեզ բոլորիս նորից մոտեցրին Վահագն Դավթյան հրաշալի պոետի բանաստեղծական աշխարհին՝ միաժամանակ բարձրացնելով դեպի Վահագն Դավթյան ճանաչելի ու անճանաչելի երևույթը…

Ես կարող էի դարիս ճակատը
Բանաստեղծության աստղերով զուգել,
Բայց իմ ճակատը փշրեցին քարով…

«Վահագն Դավթյանը սիրում էր առհասարակ առավոտը, առավոտի երգիչ էր, և այդ առավոտը միշտ նրա հետ էր… այդ սիրուց էլ ծնվեցին բանաստեղծություններ…»,-այսպես բացեց Վահագն Դավթյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հուշ-միջոցառումը պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը:

Պրոֆեսորն իր «Կապույտ առավոտների երգիչը» բանախոսությամբ մի անիմանալի ու թանկ աշխարհ բացեց ներկաների առաջ, «գրականության ուսուցիչ», «ազդեցության ակունք» և «ռոմանտիզմի բանաստեղծ» Վահագն Դավթյանի բացած բանաստեղծական արահետներով մեզ տարավ դեպի արևը, դեպի լույսը… Քանզի օրը բանաստեղծինն էր, և Մանկավարժական համալսարանում նա էր օրվա տանտերը՝ 1960-ականների գրականության առաջատարը, միտքն ու ոգին, «խղճի արթնության մունետիկը»…

Պրոֆեսորն անդրադարձավ բանաստեղծի աշխարհաճանաչողությանը, կյանքի էջերին՝ փաստելով, որ Արաբկիր գյուղաքաղաքում ծնված, բայց 4 տարեկանում ծննդավայրից զրկված բանաստեղծը այսօր էլ, մահից գրեթե քառորդ դար անց, առավոտը բաշխում է աշխարհին, իրեն պահելով Կապույտի գունաշխարհը՝ «մանուշակների թախիծը կապույտ»:

Ու թեև «քմահաճ ճակատագիրը ուրիշ կերպ տնօրինեց բանաստեղծի բախտն ու տաղանդը», միաժամանակ ուժ տվեց նրան՝ դիմակայելու մարտահրավերներին և ստեղծելու մի զարմանահրաշ բանաստեղծական աշխարհ, որ այսօր բոլորինն է ու նաև նույն այդ ժամանակինը…

Եվ հանդիպումը ապագա մանկավարժների նոր սերնդի հետ ավելի քան յուրահատուկ էր…

Մանկավարժական համալսարանը 100 տարեկան է, 100 տարեկան է նաև մեծանուն բանաստեղծը: Բուհի ռեկտոր Սրբուհի Գևորգյանն ընդգծեց այդ փաստը՝ ողջունելով մեզ համար «ճանաչելի և, այնուամենայնիվ, դեռևս չճանաչված», Վահագն Դավթյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիպման առթիվ:

Պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանի հարցադրումը օրվա պահանջ էր՝ գրականության ոլորտում ո՞վ է այն հերոսը, որի օրինակով պետք է առաջնորդվի Բանասիրական ֆակուլտետը, և որի ձևավորած արժեհամակարգով ուղղորդվի ապագա ուսուցիչը:

Ռեկտորը վստահ է՝ Վահագն Դավթյանն այն մեծանուն բանաստեղծներից է, որը «մեզ օգնելու է ձևավորել այդ արժեհամակարգը, ուստի պետք է հավատարիմ մնանք նրա բանաստեղծական արարումներին ու մտքի թռիչքներին»:

Բանաստեղծի ստեղծագործական աշխարհի գունապնակում նոր ու գեղեցիկ գույների հայտնաբերման փնտրտուքով էր լեցուն Բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Տաթև Թամրազյանի ելույթը՝ ուսանողի ջերմ հայացք Վահագն Դավթյան մարդու ու բանաստեղծի ապրած կյանքին ու ստեղծագործությանը:

Հուշ-հանդիպումն իր ասմունքի հզոր տարերքով առավել ջերմացրեց ՀՀ վաստակավոր արտիստ Սիլվա Յուզբաշյանը, ով ներկաներին հուզմունքի բազմաթիվ պահեր պարգևեց բանաստեղծի կյանքի ու գրական հարուստ ժառանգության Յուզբաշյանական աննկարագրելի բացահայտումներով:

Բանաստեղծի ստեղծագործությունների հիման վրա գրած իր երաժշտական հետաքրքիր կատարումներով հանդես եկավ ՀՀ ժողովրդական արտիստ Ռոբերտ Ամիրխանյանը, ով նաև իր ափսոսանքն ու մտահոգությունը հայտնեց՝ «մեր ազնվազարմ լեզվին ինչպես ենք դավաճանում»:

Օրն իր ներկայությամբ պատվեց և սրտի խոսք ասաց բանաստեղծի դուստրը:

Ու թեև օրը մեծ բանաստեղծինն էր, բայց նաև ուսանողներինը, որովհետև նրանք ճիշտ ու գեղեցիկ ապրելու մեծ դաս առան, որը կփայփայեն իրենց մեջ՝ տարիներ հետո որպես բանաստեղծական ճակատագրի կապույտ մի հուշ փոխանցելու իրենց սաներին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Երվանդ Պետրոսյան. Ապրելու և ապրեցնելու օրինակ

Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետում դեկտեմբերի 9-ին կազմակերպել էին ֆակուլտետի շրջանավարտ, բանաստեղծ, մանկագիր Երվանդ Պետրոսյանին նվիրված հուշ -միջոցառում:

Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Աշոտ Գալստյանը համալսարանի հիմնադրման 100-ամյակի համատեքստում ներկայացրեց ֆակուլտետն ավարտած երևելիներին՝ Հրանտ Մաթևոսյան, Ռազմիկ Դավոյան, Երվանդ Պետրոսյան…

Դեկանն ընդգծեց՝ Երվանդ Պետրոսյանը հատկապես ճանաչված է որպես մանկագիր, նրա ստեղծագործությունները տեղ են գտել դպրոցական դասագրքերում:

Բանաստեղծի հիշատակին արժանին մատուցելու համար Բանասիրականի լսարանում հավաքվել էին դասախոսներ, ուսանողներ, գրողի ժամանակակիցներ ու հարազատներ:

Ներկաները դիտեցին Երվանդ Պետրոսյանին մասին պատմող տեսաֆիլմ, ապա ուսանողները ներկայացրին նրա կյանքից հիշարժան դրվագներ և ստեղծագործություններ:

Արթիկի շրջանի (այժմ Արագածոտնի մարզի) Հնաբերդ գյուղում ծնված Երվանդ Պետրոսյանի բեղուն գրչի ներքո ծնվել են բազմաթիվ ժողովածուներ՝ «Պատուհան», «Անվախճան օր», «Հեքիաթ մոծակի և փղերի մասին», «Ժամանակի ծառը», «Արևի տոնը», «Արագածից Արարատ», «Հազարան հավք», «Գաղտնիքի ծառ», «Մկնագիրք», «Կաթ-կաթ հեքիաթ», «Գիրք ելից», «Պապ ու թոռ» և այլ գրքեր, որոնց մեջ գերիշխողը մանուկների հանդեպ անթաքույց սերն է:

Երվանդ Պետրոսյանի ստեղծագործական աշխարհի մասին էր դոցենտներ Մելինե Գիլավյանի և Նաիրա Խաչատրյանի զեկուցումները:

Դոցենտ Մելինե Գիլավյանն անդրադարձավ գրողի մանկական ստեղծագործություններին, գրական վարպետությանն ու պատկերավորման բանարվեստին՝ ընդգծելով՝ «ավանդապահ լինելով նա նորարար էր և նորարար լինելով՝ ավանդապահ»:

Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Նաիրա Խաչատրյանը նկատեց՝ Երվանդ Պետրոսյանի գրական ժառանգությունը հսկայական հարստություն է, կյանքադարան. և որքա՜ն ճշմարիտ է մանկության բնորոշումը՝ «ամեն անհատականություն իր մանկության ճշգրիտ պատկերն է»:

Այն, որ մանուկների համար գրելը դժվար գործ է, շատերը գիտեն, և շատ հանճարեղ գրողներ չեն համարձակվել գրել մանուկների համար: 60-ականներին գրական ասպարեզ մտած Երվանդ Պետրոսյանի տաղանդն ու գրական վարպետությունը հատկապես նկատելի էր մանկագրության ասպարեզում: Գրողի խոհափիլիսոփայության առանցքում մարդն էր՝ իր բոլոր մտահոգություններով ու տագնապներով, իսկ գրողի մտածումը՝ ինչպես է մեծանում երեխան:

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ, ծնունդով հնաբերդցի Հովհաննես Սարգսյանը ներկայացրեց գրողի մանկության և պատանեկության ընկերոջ՝ Լյուդվիգ Կարապետյանի հրատարակած «Երվանդ Պետրոսյան. բանաստեղծը-…երկու սրտով» գիրքը, ուր հեղինակը ներկայացրել է Ե. Պետրոսյանի մասին իր հուշերը մանկությունից մինչև պատանեկություն: Իսկապես՝ Երվանդ Պետրոս-

➢5

Երվանդ Պետրոսյան.
Ապրելու և ապրեցնելու օրինակ

➢4 յանը երկու սիրտ ունի՝ մեկը պատկանում է երեխաներին, մյուսը՝ մեծերին:

Պետրոսյանական կյանքի ու գրականության սեփական ըմբռնումներով հանդես եկան ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Աննա Կոստանյանը և մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Արևիկ Գոմցյանը:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը հպարտությամբ նշեց, որ ժամանակակից հայ մանկագրության խոշորագույն դեմքերը՝ Սուրեն Մուրադյանը, Լիպարիտ Սարգսյանն ու Երվանդ Պետրոսյանը Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի շրջանավարտներ են՝ հայրենասեր, ուսումնատենչ մարդիկ, որոնք կրում են հայ ազգի բնավորության լավագույն գծերը:

Արարատ Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանն ասաց. «Ես շա՜տ վաղուց եմ ճանաչում Երվանդ Պետրոսյանին՝ նրա փխրուն բնավորությունը, որը թաթախված է մարդասիրությամբ և հայրենասիրությամբ»:

Վաչե Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ Մարտին Գիլավյանի հուշերում Երվանդ Պետրոսյան մոլի շախմատասերն էր և նրա հետ խաղացած բազմաթիվ շախմատային պարտիաների հետաքրքիր դրվագները:

Պրոֆեսոր Գիլավյանը նաև նկատեց՝ հայ գրականագիտական միտքը պարտք ունի մանկական գրականությանը, ապա ցավով ակնարկեց, որ շատ քիչ են տպագրվում մանկական գրականությանը վերաբերող գրականագիտական հոդվածներ:

Հրապարակախոս, լրագրող Հովհաննես Պապիկյանը հուզմունքով ներկայացրեց «մեկ ուրիշ Երվանդի», որի հետ վեց տարի աշխատել է ռադիոյի երիտասարդական հաղորդումների բաժնում: Հովհաննես Պապիկյանը նշեց, որ Երվանդ Պետրոսյանը սկզբունքային լրագրող էր և պատմեց, թե այդ սկզբունքայնությունը ինչպես էր դրսևորվում Հովհաննես Շիրազի մասին ֆիլմը նկարահանելիս, որի հանդեպ նրա սերն անչափելի էր:

Արձակագիր Հովիկ Վարդումյանը ևս վերհիշեց սիրելի ընկերոջ հետ կապված հետաքրքիր պատմությունները՝ ավելացնելով. «Երվանդը իր լույսով, իր գործով կլուսավորի հարահոսը»:

«Այս պահին չեմ կարող թերթել հիշողությունների շղթան՝ առանձնացնելու Երվանդ Պետրոսյանի մասին հուշերս, այնքան շատ են դրանք»,-ասաց բ.գ.թ., վաստակավոր մանկավարժ, Երվանդ Պետրոսյանի կուրսընկեր Տարիել Պալյանը: Նա հետաքրքիր դրվագներ պատմեց ուսանողական տարիներից, թե ինչպես են 5 տարի շարունակ 8 հոգով ապրել հանրակացարանում, հիշեց իրենց կուրսը՝ բացառիկ սովորող ուսանողներ, որոնցից իրենց տաղանդով առանձնացան արձակագիր Հրանտ Մաթևոսյանը և արտակարգ բարի, նույնիսկ միամտության հասնող, Երվանդ Պետրոսյանը:

Գրողի մեծարման հուշ-ցերեկույթին ներկա էին նաև Երվանդ Պետրոսյանի կինը՝ Ջուլիետա Պետրոսյանը, զավակները և թոռները:

Հուշի և հիշողության ջերմ մթնոլորտում գրողի ու նրա գրականության հանդեպ արժանի տուրքը հիշողության անմոռաց մի դաս էր սերունդների համար, ապրելու և ապրեցնելու օրինակ:

Ուսանողական հետազոտական աշխատանքների առաջին ժողովածուն

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետում անցկացվեց «Հոգեբանական հետազոտություններ №1. ուսանողական հետազոտական աշխատանքների նյութերի ժողովածուն»՝ նվիրված բուհի հիմնադրման 100-ամյակին: Ժողովածուն ամփոփում է ակադեմիկոս Մ. Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի կողմից կազմակերպված ամենամյա մրցույթի նյութերը, որոնցում ներկայացված են հոգեբանություն մասնագիտության բակալավրիատում և մագիստրատուրայում սովորողների կողմից իրականացված հետազոտական աշխատանքները՝ նվիրված ոլորտի արդի հիմնախնդիրներին:

Ֆակուլտետի դեկան Ռուզաննա Պետրոսյանը կարևորեց իր նախադեպը չունեցող ձեռնարկը և հույս հայտնեց, որ այն ավանդույթ կդառնա: Ռուզաննա Պետրոսյանը շնորհավորեց ուսանողներին՝ առանձին ձեռնարկով հանդես գալու առթիվ, և այն համարեց դեպի գիտություն տանող ճանապարհի կարևոր քայլ:

Դեկանն ուսանողներին՝ վաղվա իրենց գործի շարունակողներին հորդորեց՝ կարողացեք գնահատել ձեր արածը, որն ավելին անելու ցանկություն կառաջացնի: Ֆակուլտետի ղեկավարն իր գոհունակությունը հայտնեց ուսանողներին գիտական հետազոտություններն իրականացնելիս ուղղորդած և աջակցած դասախոսներին:

Ուսանողներին շնորհավորեց Մ. Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի վարիչ Լևոն Սարգսյանը, ով կարևորեց նախաձեռնությունը և ընդգծեց ձեռնարկի առանձնահատկությունը:

Գիտական ղեկավարները նշեցին, որ այս ճանապարհը կտանի դեպի առողջ մրցակցություն, որ պետք է բարձր պահել նշածողը՝ տպագրել քիչ, բայց որակյալ հոդվածներ:

Ուսանողական խորհրդի նախագահը շնորհակալություն հայտնեց ֆակուլտետի ղեկավարներին և դասախոսներին, որոնք օգնում են իրենց՝ գիտության մեջ անելու առաջին քայլերը:

Ստեղծագործական մտքի և ճաշակի համադրմամբ

Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի սրահում հերթական ցուցահանդեսն էր բացվել, ուր ներկայացվել էին դեկորատիվ-կիրառական բաժնի ուսանողների և շրջանավարտների շուրջ 60 լավագույն աշխատանքները՝ գործվածքի դիզայն, փայտի փորագրություն, մետաղի մշակում: Դրանք հիմնականում ուսանողների ընթացիկ կիսամյակային առաջադրանքներն էին և հաջողված դիպլոմային աշխատանքներ՝ բազմատեսակ դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ, որոնք պատիվ կբերեն ցանկացած ցուցասրահի: Ցուցահանդեսը նախատեսված էր անցյալ տարվա 3-րդ կուրսի ուսանողների համար, որին միացել էին նաև այլ կուրսերի ուսանողներ:

Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Արա Հակոբյանը վստահեցրեց՝ ճեմասրահը դարձել է յուրահատուկ ցուցահանդեսների վայր, ուր ներկայանում են ուսանողները, դասախոսներն ու շրջանավարտները: Դեկանն ընդգծեց ներկայացված աշխատանքների՝ բատիկայի, կարպետների, գոբելենների, փայտի և մետաղի գեղարվեստական մշակման նմուշների, հագուստի մոդելավորման և մի շարք այլ ճյուղերի ինքնատիպությունը:

«Դեկորատիվ-կիրառական արվեստների նմուշները մեր առօրյայի մասն են, որոնք գիտակցաբար, թե անգիտակից կրում ենք մենք: Դրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է մի ավանդույթ, որը միջնադարից հասել է մինչև մեր օրեր, փոխանցվելով սերնդեսերունդ: Այս արվեստը, ի տարբերություն արվեստի մյուս ճյուղերի, ավելի պահպանողական է և իր մեջ կրում է ազգային տարրեր, ինչը շատ կարևոր է այսօրվա երիտասարդների համար, որոնք ավելի շատ ձգտում են դեպի արևմուտք: Անչափ կարևոր է, որ արվեստի յուրաքանչյուր գործ իր մեջ կրի ու պահպանի ազգային նկարագիրը: Սա է այն կարևորը, որով աչքի են ընկնում ցուցասրահում այսօր ներկայացված աշխատանքները»,-ասաց Արա Հակոբյանը՝ ողջունելով պրոֆեսոր Անուշ Եղիազարյանի նախաձեռնությունն ու դասախոսների՝ դեկորատիվ-կիրառական արվեստը սերնդեսերունդ փոխանցելու ներդրումն ու նվիրումը:

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանը ցուցահանդեսի առանձնահատկությունը պայմանավորեց նման ցուցահանդեսի հազվադեպությամբ, որովհետև դեկորատիվ-կիրառական աշխատանքները բավականին աշխատատար են՝ պետք է մտահղացումը ծնվի, փոխանցվի թղթին, թղթից վերածվի նյութի:

«Անվիճելի է, որ արվեստներից ամենամասսայականն է դեկորատիվ-կիրառական արվեստը. ծնված օրից մարդը կամա-ակամա գտնվում է դեկորատիվ-կիրառական արվեստի միջավայրում. առօրյա կյանքում, աշխատանքի վայրում, թատրոնի, կինոյի, արվեստի այլ ճյուղերի մեջ անընդհատ առկա են կիրառական արվեստի նմուշներն ու պարագաները: Դեկորատիվ-կիրառական արվեստը մեր կյանքի անբաժանելի մասն է:

Պետք է ընդգծել, որ ներկայացված աշխատանքների հեղինակներն այն ուսանողներն են, որոնք մեկ ամիս սովորել են և համամաճարակի ու պատերազմի պատճառով անցել առցանց ուսուցման, սակայն դասախոսների աշխատանքի ու ջանքերի շնորհիվ կարողացել են ներկայացնել կենսուրախ աշխատանքներ»,-ասաց Անուշ Եղիազարյանը:

Մանկավարժական համալսարանի 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիա Ջանիբեկյանը խոստովանեց՝ առաջին իսկ պահից սիրեցին Մանկավարժական համալսարանն ու իրենց ֆակուլտետը՝ շնորհիվ Անուշ Եղիազարյանի, ով սովորեցրեց սիրել ու գնահատել ընտրած մասնագիտությունը: Բոլոր մյուս դասախոսների դասերին էլ սիրով են հաճախում և վստահ են՝ ճիշտ մասնագիտություն են ընտրել:

ՀՊՄՀ դասախոս Տիգրան Դավթյանը սիրով ներկայացրեց իր ուսանողների աշխատանքները՝ դրանք կիսաթանկարժեք քարերով ու արծաթի համաձուլվածքներով պատրաստված կանացի զարդեր էին, որոնք աչքի էին ընկնում յուրահատուկ ոճային լուծումներով: Աշխատանքներն առանձնահատուկ էին նաև ճաշակի ու ստեղծագործական մտքի համադրմամբ, էսթետիկ լուծումներով, որոնց մեջ ուսանողները հոգի էին դրել:

Ցուցահանդեսը համալսարանի 100-ամյակին նվիրված միջոցառումների շարքում հետաքրքիր էր ու ներկայանալի:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Հիշելու հրամայականը

Ադամ Մաշինյան – 100



անգամ ձեղնահարկում արվեստագետի ավելի քան կեսդարյա ստեղծագործական տքնանքով ծնված գործեր են՝ արվեստի վեհացնող բերկրանք պարգևող գունաշխարհ:

Ծնվել է 1922 թ. դեկտեմբերի 11-ին: Նկարել սկսել է 9 տարեկանից: Շատերի նման դառը մանկություն է ապրել, դպրոցական նստարանից կամավոր մեկնել ռազմաճակատ: Անգամ միջնակարգն ավարտել է բաներիտում, երբ արդեն նկարչության դասեր էր տալիս Ալավերդի քաղաքի Ս. Սպանդարյանի անվան և № 2 միջնակարգ դպրոցներում: 1948 թ. նա տեղափոխվել է Ալավերդուց, բայց միշտ մնացել իր ծննդավայրի սիրով արբեցած: Ինձ համար օրինակ էին նրա զգացումները 1997 թ., երբ Ալավերդու պատկերասրահում բացվել էր նրա անհատական աշխատանքների ցուցահանդեսը: Նրա աշխատանքներից մեկը հավերժ կմնա մեր քաղաքի տարեգրության հետ: Դա նրա նվերն էր քաղաքի 65-ամյակի տոնակատարության առթիվ:

Նրա վրձնի հետքերն, անշուշտ, դարձել են նաև անհատական հուշեր իր բնաշխարհի մարդկանց մասին, իսկ իր համար ամենաթանկ նվերը նա համարում էր Շնող գյուղի համայնքի ավագանու 2003.թ մայիսի 25-ի թիվ 7 որոշումը՝ մի շարք հայրենակիցների հետ նաև իրեն «Պատվավոր շնողնեցի» կոչմանն արժանացնելու համար:

1957 թվականին, Գեղարվեստաթատերական ինստիտուտն ավարտելուց հետո, Ադամ Մաշինյանն ուսուցչություն է արել Երևանի դպրոցներում: 1960 թ. աշխատանքի է հրավիրվել Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտ և շուրջ 30 տարի կյանք ճանապարհել նկարիչների մի ողջ համաստեղություն: 1967 թ.-ից մասնակցել է հանրապետական, միջազգային ցուցահանդեսների, ունեցել անհատական ցուցահանդեսներ: Նրա աշխատանքները ցուցադրվել են Ռուսաստանի Դաշնությունում, Գերմանիայում, Չեխոսլովակիայում, այլուր:

Իր հայրենի հողին ու ջրին բազում թելերով էր կապված անվանի նկարիչը, բայց նրա կտավները մեկ անգամ են եղել հայրենի օրրանում: Այսօր էլ աչքերիս առաջ են նրա Լոռվա բնապատկերները: Ահա դեպի ի-

րենց են կանչում «Սևծովյան» պատկերաշխարհը, «Ծերունու դիմանկարը», «Իսրայել Օրի», «Ստեփան Շահումյանի վերջին գիշերը» գործերը: Ադամ Մաշինյանը նկարազարդել է ու ձևավորել գրքեր, նաև դիմանկարներ ու քանդակներ ունի:

...Շնողում այսօր էլ մուրճի զնգոց կամ կացնի ձայն լսելիս շատերը մտաբերում են «Մ. Շ.» դաջվածքով գործիքները, որ նկարչի եղբորը՝ դարբին Շավարշին էին պատկանում: Դարբինը ժամանակին բարձրաձայնել է. «Իմ կացինները հավերժ են»: Լսել եմ, որ այդ դաջվածքի տեսքն էլ ձևավորել է նկարիչ Ադամ Մաշինյանը:

2006 թ. Ադամ Մաշինյանը Երևանում ավարտեց իր երկրային կյանքը և ինքն էլ գնաց հավերժանալու:

Ասում են արվեստի իսկական գործերը տարածություն և ժամանակ չեն ճանաչում: «Հավերժի ճանփորդներ են» մաշինյանական շատ գործեր: Նրա ստեղծագործությունների հետնորդներ են իր սաներից շատերը, այդ թվում զավակները՝ Ռուբենը և Գոհարը, եղբորորդին՝ Տիգրանը: Առաջինը նրանց մերձավորների և մաշինյանական արվեստի երկրպագուների համար կրկնում եմ, որ արվեստի նվիրյալները չեն մահանում, հեռանում ու հնազանդ հանճարի ձայնին՝ հավերժանում են: Այդ հավերժի ճանապարհի մի լուսավոր փարոս է ճանաչված նկարչի 100-ամյա հոբելյանը: Վերջերս մեծ շուքով նշվեց մանկավարժական համալսարանի (Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտ) 100-ամյակը: Ինստիտուտի հասակակիցներ էին ճանաչված լոռեցիներ, ժամանակին սիրված դասախոսներ Ադամ Մաշինյանը, կինոարվեստի երախտավոր Յուրի Երզնկյանը, մեքենագետ Դավիթ Սահակյանը:

Շնորհավոր բոլոր հոբելյանները, որ ինքնատիպ ու լուսավոր կանգառներ են մեր մեծ երթի ճանապարհին:

Վաղարշակ ՂՈՐԽՄԱԶՅԱՆ
ՀՊՄՀ շրջանավարտ

Հանդիպում Օլգա Մաչեխինայի հետ

«Մոսկվայի պետական քաղաքային համալսարանի դասախոս, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Օլգա Մաչեխինան Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի նախաձեռնությամբ դեկտեմբերի 5-ին այցելել էր Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան: Օլգա Մաչեխինան հետաքրքիր դասախոս է, որը մշակույթին, գրականությանը և մանկավարժությանը վերաբերող նորարարական ծրագրեր է իրականացնում, նաև «Ընթերցանության երկիր» հայտնի մրցույթի կազմակերպիչն է:

Մանկավարժական համալսարանում նա անցկացրեց «Գրականական մեդիածրագրավորումը որպես մշակութային կոդավորման նորագույն գործիք» թեմայով սեմինար:

«Այս սեմինարի թեման նորություն է մեզ համար. նորարական դասեր անցկացնելու առումով սա հետաքրքիր է թե՛ բուհի դասախոսների, թե՛ դպրոցների ուսուցիչների համար: Սա լոկ սովորական սեմինար չէ, անց է կացվելու կլոր սեղան՝ բանավեճի և երկխոսության ձևաչափով: Հետաքրքր է, որ մեր ռուսաց լեզվի և գրականության ամբիոնների դասախոսների համար լավ հնարավորություն է՝ կիսելու իրենց փորձը, իսկ այսօր ձեռք բերած նորություններն էլ անպայման կկիրառենք դասապրոցեսի ընթացքում,-ասում է ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանը: -Քննարկումը բավականին հետաքրքիր է նաև այն առումով, որ այն կապված է մշակույթի հետ, միայն մեդիածրագրավորման աշխատանքի կազմակերպումը չէ. գոյություն ունեն մշակույթի կոդեր. չէ՞ որ մենք օտար լեզու ենք դասավանդում, ինչը չենք կարող անել առանց մշակույթի: Մշակույթը միշտ պետք է ներառվի դասերի ընթացքում. դրա համար այս քննարկումը մեզ համար շատ կարևոր է»:

Բանավիճային քննարկմանը մասնակցում էին Մանկավարժական համալսարանի Արտասահմանյան գրականության, Ռուսաց լեզվի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնների դասախոսները և ուսանողները, որոնք փաստեցին՝ մոսկվացի դասախոսի հետ հանդիպումը շատ կարևոր էր և հետաքրքիր:

Սեմինարի ընթացքում մասնակիցները ծանոթացան գրականական մեդիածրագրավորման սերտիֆիկացված տեխնոլոգիաներին, մշակութային կոդավորմանը, նաև հնարավորություն ունեցան կրթական տեխնոլոգիաների գործիքակազմը համեմատել համամարդկային արժեքների հետ:

Օտար լեզվի դասավանդման և լեզվաբանության արդի խնդիրները

Համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված ձեռնարկների շարքը համալրվեց ևս մեկով. Ռուսաց լեզվի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ բուհում կայացավ «Ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման և լեզվաբանության արդի խնդիրները» թեմայով միջազգային 3-րդ գիտաժողովը:

Խառը ձևաչափով անցկացվող գիտաժողովին մասնակցում էին նաև Ռուսաստանի Դաշնության առաջատար բուհերի դասախոսներ, ինչպես նաև ուսանողներ:

«Մանկավարժականում, բարձրագույն կրթության ոլորտում, մեկտեղված են ավանդականն ու նորարարական մեթոդները: Մենք հպարտ ենք բուհի պատմությամբ և այն նվիրյալներով, որոնք կանգնած են դրա ստեղծման ակունքներում, նաև նրանցով, որոնք այսօր էլ ջանք չենք խնայում բուհի հեղինակությունն ու վարկանիշը բարձր պահելու համար: Մեր ամբիոնն անմասն չէ երիտասարդների դաստիարակության գործիցգ փորձառու մասնագետները նրանց են փոխանցում մասնագիտական հարուստ գիտելիքներ»,- գիտաժողովի մեկնարկին նշեց ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Նաիրա Դալյանն ու հույս հայտնեց, որ արդեն ավանդական դարձած գիտաժողովի շրջանակներում կքննարկվեն լեզվաբանության և ռուսերենի՝ որպես օտար լեզվի մեթոդաբանության արդիական հարցեր:

ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը նկատում է՝ գիտաժողովն անցկացվում է մեր երկրի համար բարդ ժամանակներում: Այն լավ առիթ է վերանայելու մեր առաջնահերթությունները, ապա շարունակելով՝ կրթության ոլորտը լուրջ բարեփոխումների է ենթարկվում, և գիտաժողովում քննարկվող թեմաներն, այդ առումով, առաջնային ու կարևոր են:

Լինելով նույն ամբիոնի դասախոս՝ Մարիամ Իսպիրյանը նկատում է՝ ռուսերենի դասավանդման ոլորտում պետք է վերանայել ինովացիոն տարբեր մեթոդների ներդրումը, իսկ նման քննարկումներում ընդգրկել ոչ միայն դասավանդողներին, ուսանողներին, այլև

➤7

...լեզվաբանության արդի խնդիրները

➢6 աշակերտների ծնողներին:

«Ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման և լեզվաբանության արդի խնդիրները» թեմայով միջազգային գիտաժողովում քննարկվեցին լեզվաբանական գիտակարգերի ուսումնասիրման շրջանակներում երկլեզու ուսանողների ուսուցման առանձնահատկությունները, ռուսերենի բառային միավորները երկլեզու ուսանողների խոսքում, ինչ պետք է իմանա ռուսերենի՝ որպես օտար լեզվի ապագա դասավանդողը:

Ներկայացվեցին նաև գրական ստեղծագործության պատկերավոր համակարգում ֆոտոնիմների ու զոոնիմների գեղարվեստական իմաստը, նախագծի մեթոդը ռուսերենի դասավանդման շրջանակներում, դիրքի ստորոգելիների դասակարգման խնդիրները, հաղորդակցական խնդիրները՝ որպես լեզվաբանական և մշակութային կարծրատիպերի հետևանք և այլն:

Առցանց ձևաչափով գիտաժողովին մասնակցած Մոսկվայի տեխնոլոգիական համալսարանի ամբիոնի վարիչ Տատյանա Վասիլևան նկատում է՝ ռուսերենի և գրականության հանդեպ հետաքրքրությունը Հայաստանում միշտ է եղել: Բանախոսն ընդգծում է՝ գիտաժողովը ևս մեկ անգամ ապացուցում է ռուսերենի դասավանդման կարևորությունն ու պահանջարկը մեր երկրում:

Օլգա Ուսկովան էլ հավելում է՝ ռուսաց լեզվի մասնագետների հայկական դպրոցը տարիների պատմություն ունիգ հայ գործընկերն ունեն իրենց ծանրակշիռ դերն ու լեզվաբանական ավանդույթները:

Որպես ամփոփում՝ ծավալվեց շահագրգիռ քննարկում, եղավ հարց ու պատասխան:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

Փլոգինգը ճանաչում է գտնում Հայաստանում

Դանդաղ վազքի, արագ քայլքի կամ հեծանվավազքի օգնությամբ, կարճ ասած՝ փլոգինգի շնորհիվ ամեն օր, աշխարհի տարբեր անկյուններից հավաքվում են շրջակա միջավայրն աղտոտող թափոնները: Փլոգինգի հայրենիքը Շվեդիան է, սակայն տարիների ընթացքում արշավը մեծ տարածում է գտել նաև այլ երկրներում:

2021 թվականին «Փլոգինգ Արմենիա»-ի հիմնադիր Դավիթ Մուրադյանը Երևանում հիմնեց կազմակերպությունն ու տարվա ընթացքում մի քանի անգամ նախաձեռնում է արշավային փլոգինգներ: Բացառություն չէր նաև նոյեմբերի առաջին շաբաթ օրը՝ հագեցած կրթական խաղերով, նվերներով, բուն փլոգինգով և նորանոր ծանոթություններով: Սկզբնակետը Երևանի «Մանկական» այգին էր, որտեղ էլ հավաքվել էին օրվա «դեղին» մասնակիցները: Կազմակերպչական հարցերով պատասխանատու Նարե Աբրահամյանն էր եղանակին համապատասխան ընտրել մասնակիցների դեղին հանդերձանքը, և յուրաքանչյուր մասնակից պիտի ունենար որևէ դեղին աքսեսուար:

Կազմակերպության հիմնադիր Դավիթ Մուրադյանը մեզ հետ զրույցում պատմեց արշավի հայրենիքի, գաղափարի պատմության և տարածման մասին, նշելով՝ առաջին անգամ փլոգինգով զբաղվել են վազքի դուրս եկած մարդիկ, որոնք նկատել են դրսում թափված աղբը և հավաքելով՝ տեսակավորել դրանք: Նաև հավելեց, որ նախաձեռնությունը Շվեդիայում 2016 թվականին է սկսվել, սակայն 2 տարի անց աշխարհի 100 երկրում մարդիկ փլոգինգով էին զբաղվում:

Հիմնադիրը պատմեց, որ տարիներ առաջ Գյումրիում, համայնքային զարգացման ծրագիր իրականացնելիս, անդամներից մեկը փլոգինգի մասին է խոսել: Գաղափարը հետաքրքրել է ներկաներին, և մտադրվել են Գյումրին մաքրել աղբից ու նորությունը տեղադրել սոցիալական ցանցերում:

«Կարծում էինք քչերը կմասնակցեն, և որ փլոգինգը գյումրեցիների համար չէ, սակայն օրերի ընթացքում, միջազգային կազմակերպություններ, անհատներ, օտարերկրյա հյուրեր մասնակցելու հայտ ուղարկեցին: Արդյունքում միջոցառմանը մասնակցեց 500 մարդ»,- պատմեց հիմնադիրը:

Քաղաքի տարբեր հատվածները աղբից մաքրելու բուն գործընթացը սկսվեց մարմնամարզությամբ: Ներկաները բաժանվել էին 3 խմբի՝քայլորդներ, հեծանվորդներ և վազորդներ: Նրանց մեջ տեղացիներից բացի նաև օտարազգի շատ հյուրեր կային, որոնք մեծ պատրաստակամությամբ օգնում էին աշխատանքներին:

Մասնակիցներն աջակցեցին քաղաքի մաքրման աշխատանքներին, ունեցան հագեցած ծանոթություններով առօրյա:

Մասնակիցների ջանքերով հավաքվեց և մաքրվեց շուրջ 40 տոպրակ պլաստիկ, 20 տոպրակ ընդհանուր թափոն և 9 տոպրակ թուղթ:

Ներկաներից շատերը պատրաստակամություն հայտնեցին՝ նորից մասնակցելու նման միջոցառումների և զարգացնելու փլոգինգը Հայաստանում:

Լիլիթ ԱՃԵՄՅԱՆ

Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի

«Ցանկացած տեղեկատվության պիտի թերահավատորեն մոտենալ և պարտադիր ստուգել ...»

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողները հյուրընկալեցին «Հետք» մեդիա գործարանի՝փաստերի ստուգման թիմին՝ սեմինարավար Տրդատ Մուշեղյանի, Սամսոն Մարտիրոսյանի և Վահե Սարուխանյանի գլխավորությամբ:

Հետաքննող լրագրող Տրդատ Մուշեղյանը սլայդի միջոցով բացատրեց փաստերի ստուգման կարևորությունն ու



անհրաժեշտությունն այսօր: Նշեց, որ փաստերի ստուգումը տեղեկատվության ճշգրտման գործընթացն է առկա փաստերի ուսումնասիրման միջոցով: Նաև հավելեց, որ տվյալ նախագիծը 2021 թվականից է իրականացվում և նպատակը Հայաստանում փաստերի ստուգման մշակույթը զարգացնելն է:

Թե ինչով է կարևոր առօրյայում փաստերի ստուգումը՝ սեմինարավարը նշեց, որ առաջին հերթին կեղծ լուրերին չտրվելու և դրանցից զերծ մնալու համար, ինչպես նաև բացատրեց «missinformation» և «desinformation» տերմինները: «Ապատեղեկատվությունը՝ «desinformation»-ը, հրապարակվում է միտումնավոր, կոնկրետ նպատակով, իսկ «missinformation»՝սխալ տեղեկատվությունը կարող են հրապարակել բոլորը, դա անուշադրության հետևանք կարող է լինել»,-ընդգծեց Տրդատ Մուշեղյանը:

Սամսոն Մարտիրոսյանն էլ նշեց, որ ինչ-որ կասկածի դեպքում անհրաժեշտ է սեփական փորձով համոզվել ու ճշտել լուրի հավաստիությունը:

«Փաստերի ստուգումը նպաստում է նաև մեդիագրագիտության մակարդակի բարձրացմանը», - ընդգծեց Սամսոն Մարտիրոսյանը:

Սեմինարավարներն առանձնացրին նաև փաստերի ստուգման 2 տիպ՝ «անտեռ» և «փոստոք»: Առաջինը՝փաստերի ստուգումն է նախքան հրապարակելը, իսկ փոստոքը՝ հրապարակված նյութերում և հոդվածներում առկա տեղեկատվության ստուգումը: Ինչպես նշեց Տրդատ Մուշեղյանը՝ ցանկացած տեղեկատվության պիտի թերահավատորեն մոտենալ և պարտադիր ստուգել, հատկապես պաշտոնյաների խոսքն ու հատկապես լրագրությամբ զբաղվող անձինք:

Ներկաները տեղեկացան նաև «In fact» Ֆեյսբուքյան խմբի մասին, որը լրագրողներին կամ պարզապես հետաքրքրասեր անձանց փաստերի ստուգման տարբեր հմտություններ է սովորեցնում՝ սկսած ամենահասարակ google որոնումից:

Որպես օրինակ մատնանշվեցին որոշ որոնողական գործիքներ՝Yandex image search, google image search, tiny.com:

Արդյո՞ք ձեռնարկվում են միջոցներ՝ ավագ սերնդին ապատեղեկատվությունից զերծ պահելու համար հարցին՝ փաստերի ստուգման թիմի ղեկավար Վահե Սարուխանյանը պատասխանեց, որ, ի տարբերություն երիտասարդների, ավագ սերնդի դեպքում խնդիրն ավելի լուրջ է ու դժվար՝ ցանկացած կայքի կամ լրատվամիջոցի հանդեպ անվերապահ հավատալու իմաստով: Վերջինս հիշեց, որ «Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը» փորձել էր դասակարգել Հայաստանում վստահելի և անվստահելի կայքերը, ինչն ազդում էր կայքերի դիտելիության վրա, և բողոքների արդյունքում կենտրոնը դադարեցրել էր այդ հետազոտական աշխատանքը:

Լիլիթ ԱՃԵՄՅԱՆ

Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի

«Իմ սիմֆոնիկը» երիտասարդներին համախմբում է

«Իմ սիմֆոնիկը» երիտասարդական կրթամշակութային ծրագիրը ստեղծել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, որին մասնակցել են Երևանի տարբեր համալսարանների շուրջ 2000 ուսանողներ»,- մեզ հետ զրույցում նշեց ԵՊՀ ուսանողուհի Ֆարիդա Խաչատրյանը: Ծրագիրն իրականացվում է սեպտեմբերից և նպատակն ունի դասական երաժշտության նկատմամբ հասարակության ամենաակտիվ խմբի հետաքրքրությունը բարձրացնել:

2022 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տարբեր բուհերի ուսանողներ ներկա են գտնվել նվագախմբի համերգներին: Ի դեպ, ուսանողների համար կազմվել է դասական երաժշտության լավագույն ստեղծագործությունների համերգացանկ, որպեսզի ուսանողները նորովի ընկալեն դասական համերգների բովանդակությունը և դառնան մշակույթին վերաբերող տեղեկատվության տարածման առանձնահատուկ դեսպաններ երիտասարդության և հանրության շրջանում:

Ծրագրի ավարտից հետո նախատեսվում է կազմակերպել ֆոկուս-խմբային քննարկումներ և պարզել ուսանողների կարծիքը համերգների բովանդակային և կազմակերչական հարցերի վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա միջոցառումները կազմակերպել ուսանողների նախընտրությունների և ակնկալիքների հիման վրա:

Նախքան համերգներին այցելելը ուսանողներին տրամադրվում է հետաքրքիր տեղեկատվություն կատարվելիք ստեղծագործությունների և կոմպոզիտորների մասին:

Ֆարիդա Խաչատրյանը, որն այդ ծրագրի մասնակիցներից է, նշում է՝ համերգասրահներ այցելելուց, երաժշտություն լսելուց, հաճույք ստանալուց բացի, իրենք ծանոթանում են նաև կոմպոզիտորների կյանքին, ստեղծագործություններին և նրանց պատմությանը, ինչը կրթադաստիարակչական նշանակություն ունի: Ֆրիդան նաև ընդգծում է նման միջոցառումներին անվճար ներկա գտնվելու հնարավորությունը, ինչը շատ ողջունելի է: Նա վստահ է, որ ուսանողները համերգից հետո իրենց շրջապատում կկիսեն իրենց տպավորությունները, և դրա արդյունքում է՛լ ավելի շատ երիտասարդներ կներգրավվեն ծրագրում:

«Իմ սիմֆոնիկը» ծրագրին մասնակցել է շուրջ 330 աբովյանական:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ համագործակցությունն այսքանով չի սահմանափակվելու»,-վստահեցրեց ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը:

Գոհար ԹՈՐՈՍՅԱՆ

Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի

ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

Օձերի պատճառով դպրոցը փակվել է

Վրաստանի Նինոծմինդայի շրջանի Սամեբա գյուղը վերջերս հայտնի է դարձել մի «յուրահատկությամբ», որը գուցե շատերիս համար բացառիկ երևույթ է, իսկ տեղի բնակիչների համար՝ սովորական առօրյայի մաս. նրանք այդ պայմաններում ապրում են:

Մինչև վերջերս Նինոծմինդայի շրջանի Սամեբա գյուղը առավելապես հայտնի էր թռչունների բազմազանությամբ, որոնց կարելի էր հանդիպել Մադաթափա լճի մոտակայքում: Սակայն հիմա գյուղը հանրահայտ է դարձել հաճախակի երկրաշարժերի և դպրոցի շենքում օձերի առկայության պատճառով:

Սամեբայի բնակիչների համար օձերի ի հայտ գալը արտասովոր երևույթ չէ: Մարդիկ արդեն չեն վախենում երկրաշարժերից՝ տներից դուրս չեն գալիս, իսկ օձերից առանձնապես պաշտպանվելու կարիք էլ չեն տեսնում, քանի որ դրանք թունավոր չեն, սակայն երեխաներին զգուշացնում են՝ հեռու մնալ, իսկ տեսնելու դեպքում չբռնել:

Օձերի պատճառով գյուղի դպրոցն անցել է առցանց ուսուցման: Դպրոցի տնօրեն Մզեքալա Մինաձեն ասում է, որ սա առաջին դեպքն է, որ դպրոցը փակվում է, քանի որ այս տարի օձերի քանակը շատ-շատ է. «Այսպիսի դեպքեր շատ են եղել, բայց օձերը քիչ են եղել, եթե, օրինակ, անցած տարի 5 հատ օձ կար, այս տարի այդ թիվը հասել է 50- 60-ի: Անցած տարիներին դպրոցը չէինք փակում, քանի որ մենք ունեինք դպրոցում հատուկ ախտահանիչ հեղուկներ և ինքներս էինք ախտահանում, այս տարի դա չօգնեց և դրա համար Թբիլիսիից մասնագետներ հրավիրեցինք»,– ասում է դպրոցի տնօրենը:

Թե երբ կանցնեն նորմալ դասապրոցեսի՝ տնօրենը չկարողացավ հստակ նշել: Գյուղի բնակիչներն ասում են, որ տեղի իշխանություններն իրենց հիշում են միայն ընտրությունից ընտրություն:

Եթե մասնագետներն օձերի հայտնվելը կապում են անհան-

գիստ երկրակեղևի հետ, ապա Սամեբայի բնակիչներն ընդհանրապես նման կապ չեն տեսնում: «Երկու տարի է՝ պարբերաբար երկրաշարժեր են լինում, դա նոր բան չի մեզ համարգ հին տները ճաք են տալիս: Մենք այս ամենին սովորել ենք»,-ասում է գյուղի բնակիչներից մեկը, որի տան առաստաղն ու պատերը հաճախակի երկրաշարժերից վնասվել են. առաստաղը տախտակներով է ամրացրել, որ չփլվի: Ինչպես մեծերը, այնպես էլ երեխաները չեն վախենում ո՛չ օձերից, ո՛չ էլ երկրաշարժից: «Արդեն սովորել ենք, գիշերները երբ երկրաշարժ է լինում, նույնիսկ տնից դուրս չենք գալիս, սովորական է»,- ասում է 13 տարեկան Պետրե Մերաբիշվիլին:

Սամեբայում Մադաթափա լճի տարածքում ծառայություն իրականացնող Գագիկ Մարկոսյանն ունի երևույթի բացատրությունը. «Արդեն 15 տարուց ավելի է, որ օձեր կան գյուղում և դպրոցի տարածքում. առաջ մեր գյուղում ոչխարաբուծությունը զարգացած չէր, հիմա արդեն սարերում մոտ 30 000 գլուխ կենդանի կա. դրանք մանր եղջերավոր են և օձերին սատկացնում են, դրա համար օձերը կամաց-կամաց լցվեցին գյուղ: Գյուղում էլ, տեսնում եք, մի տուն բնակեցված է, 10 տուն՝ դատարկ: Դպրոցն էլ լճի մոտ է: Բայց այդ օձերը թունավոր չեն: Այս պահին նրանց բազմացման շրջանն է, դրա համար դուրս են եկել բներից, մի ամսից էլ չեն երևա դրսում, հետո շոգին ցրվում են: Տարիներ առաջ, երբ մեզ մոտ երկրաշարժերն այսքան հաճախակի չէին, էլի շատ օձ կար: Այդ օձերը եղել են, կան ու կարծում եմ՝ կլինեն»:

Գագիկը հիշում է, որ երբ իր երեխաները փոքր են եղել՝ տանը երաժշտություն են միացրել, օձերը սողալով ներս են մտել, հիմա նույն բանը պատմում է իր թոռներին: Նա ավելացնում է, որ հիմա անգամ կարելի է օձ տեսնել յուրաքնաչյուր խոտի տուկի տակ: Սամեբա գյուղի բնակիչները տեղեկացնում են, որ լուծում գտնվել է. «Իմ կարծիքով, օձերը շատ են, քանի որ լիճը մոտ է: Հիմա գյուղի դպրոցում աշխատանքներ են ընթանում, կբետոնապատենք հատակը և այլևս օձ չի լինի: Այդ օձերը անվնաս լորտուներ են: Երեխաները վախենում էին, դրա համար հեռավար ուսուցման անցանք, թե չէ վնասատու չեն: Հիմա բետոն կլցվի, ու այլևս ոչ մի օձ չի լինի»,- մեզ հետ զրույցում ասաց գյուղի բնակիչ Պետրոս Թամասյանը:

Էսթեր ՏԵՊԻԿՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի

Նելլի Պետրոսյանը Մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկայի բաժնի ուսանող է: Գրում է գողտրիկ հեքիաթներ, որոնցից երկուսը ներկայացնում ենք մեր ընթերցողներին:

ՋԱՏԻԿԸ



Խոր անտառում արդեն գարուն է: Ծառերն ու ծաղիկները ծաղկել են ու մեղմիկ ժպտում են իրենց գեղեցկությամբ զմայլվող թռչուններին ու կենդանիներին: Հողի տակից դուրս են գալիս արևի ջերմությանը կարոտած միջատները: Նրանց մեջ մի փոքրիկ, սև միջատ կար, նա այնքան անշուք տեսք ուներ, որ բոլորը ծիծաղում են նրա վրա և ծաղրում, որ այդքան հասարակ է:

-Նույնիսկ մենք առանձնանում ենք մեր տեսքով, նայիր՝ ինչ երկար, գեղեցիկ ոտքեր ունենք: Իսկ դու սև ու գնդլիկ, փոքրիկ բզեզ ես, կարծես ավազի մի հատիկ լինես,- ծիծաղելով ասում էին սարդերը:

-Ինչո՞ւ եք անվերջ ծաղրում ինձ, չէ՞ որ ես այնքան էլ վատը չեմ: Չեմ վնասում բնությունը, վնասակար լվիճներին եմ վերացնում, բարի գործ եմ անում մայր բնության համար: Մի՞թե այդքանը բավական չէ, որ ինձ էլ սիրեք, գոնե մի փոքր,- հեկեկալով ասաց փոքրիկ բզեզն ու գնաց մտավ մի մեծ թփի տակ, որ էլ ոչ ոք չտեսնի ու չծաղրի իրեն:

Երբ արևը մայր է մտնում, նա որոշում է լքել անտառն ու ավելի հարմար վայր գտնել ապրելու համար, որտեղ իրեն ոչ մեկը չէր ծաղրի՝ անշուք տեսքի պատճառով: Ամբողջ գիշեր քայլում է ու չի էլ նկատում, թե ինչպես է լույսը բացվում: Աչքերը տրորում է ու նկատում, որ հայտնվել է մի շատ գեղեցիկ մարգագետնում: Քիչ հեռվում տեսնում է բերետավոր մի մարդու, ով վրձինը ձեռքին գունազարդում էր շուրջբոլորը: Բզեզը, սրտում ուրախ թրթիռ զգալով, մոտենում է նրան ու մտածում, որ հենց այդ մարդը կարող է ազատել իրեն ամեն տեսակ բարդույթներից:

-Բարև ձեզ: Ներողություն, դուք ո՞վ եք,- դողդոջուն ձայնով հարցրեց բզեզը:

-Բարև, փոքրիկ բզեզ: Ես նկարիչ եմ. գունազարդում եմ բոլոր այն թփերը, ծառերն ու ծաղիկները, որոնք դրա կարիքն ունեն:

-Ինչ լա՜վ է, տեսեք՝ որքան անգույն եմ ես: Շատ եմ խնդրում, ինձ էլ գունազարդեք: Ես այլևս չեմ կարող դիմանալ ընկերներիս ծաղրանքին: Իմ անշուք տեսքի պատճառով ինձ հետ ոչ ոք չի ուզում ընկերանալ,- հեկեկալով ասաց բզեզը՝ չկարողանալով թաքցնել հուզմունքը:

-Մի՝ հուզվիր, փոքրիկ բզեզ: Ճիշտ է՝ դու առանց գունային երանգների էլ շատ գեղեցիկ ես, բայց, եթե շատ ես ուզում, քեզ նույնպես կգունազարդեմ: Նկարիչը վրձինը թաթախեց ալ կարմիր ներկի մեջ ու ներկեց բզեզի թևերը:

-Բայց, կարծես, ինչ-որ բան թերի է,- ուշադիր զննելով բզեզին, ասաց նա:

Այնուհետև սև գույնով կետիկներ նկարեց կարմիր թևերի վրա, որոնցից բզեզը յուրօրինակ տեսք ստացավ:

-Վե՛րջ, տեսքդ հիասքանչ է, սիրունիկս: Ուզո՞ւմ ես տեսնել քեզ:

-Այո՛, արդեմ չեմ համբերում տեսնել, թե ինչ տեսք եմ ստացել:

Քիչ հեռվում մի փոքրիկ լճակ կար: Նկարիչը բզեզին ուղեկցեց այնտեղ, որպեսզի նա կարողանա տեսնել իր արտաքին փոփոխությունները:

-Ես այնքան երջանիկ եմ, շատ շնորհակալ եմ, որ իմ մռայլ կյանքին նոր գույներ ավելացրիք,- ասաց բզեզն ու ուրախությունից սկսեց պտտվել նկարչի շուրջը:

-Այսօրվանից քեզ կկոչենք Ջատիկ:

-Իսկ ի՞նչ է նշանակում Ջատիկը:

-Ջատիկ՝ նշանակում է զատվել, առանձնանալ: Դու առանձնանում ես միջատներից քո արտաքին յուրօրինակ տեսքով: Ինչքան էլ պտտվես աշխարհով մեկ, չես կարողանա գտնել նման ուրիշ միջատի:

Ջատիկն այլևս չկարողացավ համբերել և նկարչին հրաժեշտ տալուց հետո, անմիջապես թռավ ու գնաց իր ընկերների մոտ, որ նրանք նույնպես տեսնեն իրեն ու հիանան իր տարբերվող ու չքնաղ տեսքով:

Կամավորական աշխատանքի կարևորությունը

Հայկական պետական մանկավարժական համալսարանի Ուսանողական խորհրդի բանավեճի ակումբը դեկտեմբերի 6-ին կազմակերպել էր սեմինար-քննարկում՝ նվիրված կամավորների օրվան: Այն վարում էր Ուսանողական խորհրդի բանավեճի ակումբի նախագահ Վարդուհի Վարդանյանը:

Սեմինարն անցավ բավականին հետաքրքիր, ուներ ուսուցողական բնույթ: Խոսվեց Հայաստանում կամավորության անրաժեշտության, ինչպես նաև կամավորության դրական և բացասական կողմերի մասին:

Ուսանողները ծանոթացան կամավորության տեսակներին և պարզեցին, թե որ տեսակին են իրենք պատկանում:

Ուսանողները վստահեցրին, որ կարևորում են կամավորության մարդասիրական տեսակը, միևնույն ժամանակ չեն բացառում եսասիրական և դասական տեսակները:

Քննարկմանը մասնակցում էին տարբեր ֆակուլտետներից ուսանողներ, որոնցից շատերն այս ո-

լորտում մեծ ակտիվություն են ցուցաբերում:

Սա ևս մեկ փորձ էր՝ միմյանց ավելի լավ ճանաչելու և կամավոր աշխատանքի կարևորութունը հասկանալու համար:

Միլենա ԱՐԹԵՆՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի Հեռուստառադիոլրագրության բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 20.12.2022 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ